տանեց գիրով, Յովհաննէս Թիւթիւնճիի գործակցութեամբ և վկայութեամբ, Խաչատուր Գաղատացի կաթողիկոսը այս ու այն յանցանքներուն համար և յայտարարեց, թէ ան ժողովուրդին կողմէ մերժուած էր և անոր տեղ կաթողիկոս ընտրուած էր ինքը։

Ամբաստանութիւնը, շնորհիւ կաշառքի, ընդունուեցաւ. Դաւիթ արքունի հրովարտակով Սիս գնաց և իրեն համախոհներ ճարելով հոն՝ կաթողիկոս եղաւ։

Խաչատուր, իր կարգին ինքզինքը պաշտպանելու համար, գնաց Պոլիս և բողոքեց իր իշխանութիւնը յափշտակողին դէմ։ Անիկա նեղը դրաւ Պոլսոյ հայ երեւելիները, ըսելով թէ իրմէ ի՞նչ վնաս տեսած էին որ դաւեցին իր դէմ։ Անոնք չքմեղեցին իրենք զիրենք՝ յայտնելով, թէ պատրիարքն է պատասխանատուն։ Երբ Խաչատուր կաթողիկոս կառավարութեան մեծերը կը սիրաշահէր Պոլսոյ մէջ, հակաթոռ Դաւիթն ալ հասաւ հոն, և երկուքին մէջ սկսաւ պայքարը։

Յովհաննէս պատրիարք Թիւթիւնճի, գլխաւոր պատասխանատուն այս պառակտումին, ստիպուեցաւ ժողով մը գումարել պատրիարքարանի մէջ, որուն ներկայ գտնուեցաւ նաև Էջմիածինի նոր նուիրակը՝ Գաղատիոյ առաջնորդ Մինաս արքեպս.ը։ Եւ որովհետև Յովհաննէս Թիւթիւնճի և Թըլթըլեանք, կաշառուած՝ Դաւիթ Կարկառեցիէն, հակառակ էին Խաչատուր կաթողիկոսին, վէճը երկարեցաւ։ Խաչատուր ձանձրացաւ և տեղի տուաւ, պայմանով որ Դաւիթ Հալէպ նստի և այն թեմին մէջ միայն ամփոփուի իր իշխանութիւնը, բայց օգնէ Սիսի աթոռին կարիքներուն։

Այս համաձայնութեամբ՝ Դաւիթ դարձաւ Հա-